



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 26 » սեպտեմբերի 2018 թ.

№ 561- ԴևՏ

ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ
ԿՈՐՈՒՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՃՇԳՐՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 7.1-րդ հոդվածի 1-ն մասի «գ» կետը և հաշվի
առնելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարարության առաջարկը՝ գազամատակարարման
համակարգում տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկման
մեթոդաբանության ճշգրտման նպատակով **հ ր ա մ ա յ ու մ ե մ**.

1. Ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1) Ս. Աղինյան՝
(խմբի ղեկավար)

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
գարգացման և մոնիթորինգի վարչության պետ,

2) Մ. Մոմջյան՝

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
սակագնային քաղաքականության վարչության պետի

- տեղակալ,
- 3) Ս. Պետրոսյան՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնի պետ,
- 4) Կ. Խոջագորյան՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի զարգացման և մոնիթորինգի վարչության տեխնիկական բաժնի պետ,
- 5) Կ. Հարությունյան՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի զարգացման և մոնիթորինգի վարչության տեխնիկական բաժնի գլխավոր մասնագետ,
- 6) Է. Միհրանյան՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի զարգացման և մոնիթորինգի վարչության տեխնիկական բաժնի առաջատար մասնագետ,
- 7) Հ. Բաղայան՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության էներգետիկայի վարչության պետ (համաձայնությամբ),
- 8) Վ. Աթայան՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության էներգետիկայի վարչության էներգետիկական արդյունավետության և տեխնիկական նորմատիվների բաժնի պետ (համաձայնությամբ),
- 9) Տ. Գնունի՝ «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ (համաձայնությամբ),
- 10) Վ. Սաֆարյան՝ «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրաէներգետիկական լաբորատորիայի վարիչ (համաձայնությամբ),

- 11) Ժ. Զաքարյան՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության որակի ենթակառուցվածքների զարգացման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (համաձայնությամբ),
- 12) Կ. Մովսիսյան՝ «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի գլխավոր խորհրդական (համաձայնությամբ),
- 13) Գ. Մարտիրոսյան՝ «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության ստանդարտ նմուշների լաբորատորիայի վարիչ (համաձայնությամբ),
- 14) Ա. Հակոբյան՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ-գլխավոր ճարտարագետ (համաձայնությամբ),
- 15) Հ. Թոմակյան՝ «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տեխնիկական բաժնի պետ (համաձայնությամբ),
- 16) Ռ. Աղասարյան՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության տեխնիկական բաժնի պետի տեղակալ (համաձայնությամբ):

2. Սույն հրամանի 1-ին կետում նշված աշխատանքային խմբին՝ 2018 թվականի հոկտեմբերի 8-ից մինչև դեկտեմբերի 14-ն ընկած ժամանակահատվածում՝

1) համադրել Ռուսաստանի Դաշնության «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված գազափոխադրման համակարգում բնական գազի անխուսափելի տեխնոլոգիական կորուստների հաշվարկման մեթոդիկաները և ներկայացնել եզրակացություն մեթոդիկաներում ընդունված մոտեցումների վերաբերյալ.


2) համապատասխան տեղեկատվության առկայության դեպքում ուսումնասիրել այլ երկրների, այդ թվում՝ Բելոռուսի Հանրապետության փորձը գազափոխադրման և գազաբաշխման ցանցերում տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկման վերաբերյալ.

3) ուսումնասիրել բնական գազի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկման մեթոդիկաներում կիրառվող գործակիցները չափումների միջոցով իրականացնելու տեխնիկական հնարավորությունը և մեթոդաբանությունը.

4) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել եզրակացություն՝ սույն կետով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի նախագահի տեղակալ**


Մ. Սողոմոնյան